Հաստատված է ԱՊԷՔ

մանկխորհրդի նիստում

նախագահ, տնօրեն

09.03.2018թ.

<<ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ-Ի

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊԷՔ ՈՒսանողական

խորհրդի նախագահ

Ա. Ընդհանուր դրույթներ

1. <<Աբովյանի պետական Էներգետիկական քոլեջ>>-ի ուսանողական խորհուրդը ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմին է:
2. Ուսանողական խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը ՀՀ օրենսդրությանը և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան սահմանվում է քոլեջի կանոնադրությամբ, քոլեջի ղեկավար մարմինների որոշումներով և սույն կանոնադրությամբ:
3. Ուսանողական խորհուրդը ապահովում է ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները քոլեջի ողջ ուսանողության շրջանում, արտահայտում և պաշտպանում է ուսանողության և հետդիպլոմային ուսուցում անցնող շրջանավարտների շահերի, նպաստում նրանց հասարակական, գիտական, ինտելեկտուալ, ստեղծագործական, մշակույթային, բարոյական և հոգևոր զարգացմանը, ստեղծում կապեր ՀՀ և արտերկրի բուհերի, գիտական, կրթական և այլ կազմակերպությունների հետ:
4. Ուսանողական խորհուրդն ունի իր խորհրդանիշը, որի տեսքը հաստատվում է ուսանողական նիստի կողմից, անդամների ընդհանուր թվի 2/ 3- ով:
5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուսանողական խորհուրդը զբաղվում է հրատարակչական գործունեությամբ, կարող է հրապարակել ամսագրեր, պարբերականներ և այլն:
6. Քոլեջի ղեկավար մարմինների, նրանց ստորաբաժանումների, քոլեջում գործող, ինչպես նաև արտաքոլեջային գիտական, կրթական, մշակութային, հոգևոր, բարեգործական և այլ կազմակերպությունների, պետական մարմինների և ֆիզիկական անձանց հետ ուսանողական խորհուրդն հարաբերությունները կառուցում է քոլեջի սույն կանոնադրության, կամ կնքված պայմանագրերի հիման վրա:
7. Ուսանողական խորհրդի կողմից կնքված պայմանագրերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ուժ են ձեռք բերում քոլեջի տնօրենի կողմից վավերացվելուց և քոլեջի կնիքով կնքվելուց հետո:

Բ. Նպատակները, խնդիրները

1. Ուսանողական խորհուրդն ապահովում է քոլեջում ուսանողական ինքնակառավարման և ուսանողական ինքնավարության գործընթացների ծավալումն ու զարգացումը, նպաստում ուսանողության և հետդիպլոմային ուսուցում անցնող շրջանավարտների իրավունքների և պարտականությունների նորմալ և անթերի կատարմանը:
2. Մասնակցում ուսումնակրթական գործընթացների, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ուսանողական գիտական գործունեության կազմակերպմանը:
3. Նպաստում ուսանողության ստեղծագործական, ինտելեկտուալ, մշակույթային և հոգևոր զարգացմանը, ուսանողության առօրյայի, հանգստի և ազատ ժամանցի կազմակերպմանը:
4. Հաստատում կապեր և գործնական փոխհարաբերություններ ՀՀ և արտերկրի շինարարական, գիտական, ուսանողական, երիտասարդական, կրթական, մշակույթային և այլ կազմակերպությունների հետ:
5. Հնարավորության դեպքում իրականացնում սոցիալական և բարեգործական նշանակության ծրագրեր, նպաստում ուսանողների սոցիալական և կենցաղային պայմանների բարելավմանը:
6. Ուսանողական խորհուրդը մշակում և քոլեջի ղեկավար մարմիններին է ներկայացնում ուսանողական կյանքին և ուսումնակրթական գարծընթացներին առնչվող հարցեր, տարբեր որոշումների նախագծեր և նպաստում դրանց ընդունմանն ու հետևողական իրականացմանը:

Գ. Կառուցվածքը, գործունեությունը

1. Ուսանողական խորհուրդն ձևավորում է ներկայացուցչական ընտրությունների սկզբունքով: Յուրաքանչյուր կուրս ուսանողական խորհրդում ունի երկու անդամ ունենալու իրավունք: Ուսանողական խորհրդի անդամներ առաջադրվում են կուրսերում: Ընտրված է համարվում այն թեկնածուն, որի օգտին քվեարկել են առավել շատ թվով ուսանողներ:
2. Կուրսային ուսանողական խորհրդի նախագահ է ընտրվում քոլեջի ուսանողների առաջարկությամբ և ուսանողական խորհրդի անդամների համաձայնությամբ:

3. Կուրսի կողմից առաջին անգամ ընտրված ուսանողական խորհրդի անդամի լիազորությունների ժամկետը մեկ տարի է:
4. Ուսանողական խորհրդի անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ուսանողական խորհրդի նիստի կողմից հաստատված ուսանողական խորհրդի անդամների իրավունքների և պարտականությունների մասին կանոնակարգով:
5. Ուսանողական խորհրդի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել հետևյալ դեպքում.
   - Նախագահության որոշմամբ նիստերից, ժողովներից պարբերաբար բացակայության, կարգապահական խախտումների և քոլեջի կանոնադրությամբ սահմանված ուսանողի պարտականությունները չկատարման դեպքում:
   - Քոլեջից հեռացվելու կամ դուրս մնալու դեպքում: Այս դեպքում քոլեջում ուսանողի իրավունքները վերականգնվելուց հետո, վեջինս չի կարող կրկին ընտրվել ուսանողական խորհրդի կազմում:
   - Անձնական դիմումի համաձայն :
6. Ուսանողական խորհրդի ղեկավար մարմիններն են.
   - Նախագահ
   - Փոխնախագահներ
   - Գլխավոր քարտուղար
   - Մշտական գործող կառուցվածքային հանձնաժողովներ
7. Ուսանողական խորհրդի նիստերը հրավիրվում են ամիսը մեկ անգամ: Արտահերթ հրավիրվում են նախագահության որոշմամբ, նախագահի որոշմամբ կամ ուսանողական խորհրդի անդամների 1/3–ի պահանջով: Նիստերն անցակցնելու համար անհրաժեշտ է անդամների ընդհանուր թվի կեսից ավելի մասնակցությունը: Որոշումները ընդունվում են, եթե կողմ են քվեարկել ներկաների կեսից ավելին: Կանոնադրությունը և կանոնադրական փոփոխությունները հաստատվում են անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ով:
8. Ուսանողական խորհրդի նիստերը՝
   - հաստատում է ուսանողական խորհրդի կանոնադրությունը և նրանում կատարում փոփոխություններ,որոնք այնուհետև հաստատվում են քոլեջի

տնօրենի կողմից: Կանոնադրական փոփոխությունների մասին առաջարկությունները խորհրդարանի նիստի քննարկմանը ներկայացվում են նախագահության կողմից կամ նվազագույն տասը անդամների գրավոր ներկայացմամբ:

- Ընտրում է ուսանողական խորհրդի նախագահություն:
- Հաստատում է ուսանողական խորհրդի գործունեության տարեկան աշխատանքային պլանը, ստորաբաժանումների և այլ կառուցվածքային մարմինների կանոնակարգերը ու աշխատակարգերը:
- Հաստատում ուսանողական խորհրդի աշխատակարգը, քննարկում կանոնադրական վերահսկողության հետ կապված հարցեր:
- Լսում և քննարկում է ուսանողական խորհրդի նախագահի, հանձնաժողովների կուրսերի ուսանողական խորհուրդների, ուսանողական խորհրդի կառուցվածքային ստորաբաժանումների և մարմինների տարեկան հաշվետվությունը:
- Լսում և քննարկում է նախագահության, հանձնաժողովների, կուրսերի ուսանողական խորհուրդների, ուսանողական խորհրդի կառուցվածքային ստորաբաժանումների և մարմինների կողմից ներկայացված հարցերը:
- Լսում է ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունները և հաստատում դրանք:
- Հստատում կամ չեղյալ է համարում ուսանողական խորհրդի անունից կնքված պայմանագրերն ու մյուս փաստաթղթերը, և սահմանված կարգով ներկայացնում քոլեջի տնօրենի վավերացմանը:
- Քննարկում է ուսանողական խորհրդի գործունեությանը առնչվող այլ հարցեր և ընդունում համապատասխան որոշումներ:

9. Ուսանողական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է ուսանողական խորհրդի նախագահը, որն ընտրվում է ուսանողական խորհրդի կողմից բաց քվեարկությամբ: Նախագահն ընտրված է համարվում, եթե նրա օգտին քվեարկել են ուսանողական խորհրդի անդամների կեսից ավելին: Նախագահության մյուս անդամներն ընտրվում են նախագահի առաջարկով:

10. Ուսանողական խորհրդի նախագահի պաշտոնական ժամկետի ավարտից կամ լիազորությունների վաղաժամկետ դադարումից հետո նախագահության լիազորությունները համարվում են ավարտված: Ուսանողական խորհրդի նախագահ ընտրվելուց կամ վերընտրվելուց հետո սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով տեղի է ունենում նախագահության ընտրություն:

11. Նախագահության կազմի կամ առանձին անդամների հետ կանչելն իրականացվում է ընտրությամբ նախատեսված կարգով, կամ իրենց դիմումի համաձայն՝ որը հաստատվում է ուսանողական խորհրդի նիստի կողմից:

12. Նախագահությունն աշխատանքային նիստեր է գումարում շաբաթը մեկ անգամ: Նիստերն իրավազոր են, եթե մասնակցում են անդամների կեսից ավելին: Արտահերթ նիստեր հրավիրվում են նախագահի որոշմամբ, կամ նախագահության անդամների 1/3-ի պահանջով: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների մեծամասնությամբ:

13. Նախագահությունը՝

- քննարկում է խորհրդարանի նիստերի օրակարգը, նախապատրաստում դրանց անցկացումը, մշակում խորհրդարանի նիստերի կողմից ընդունված որոշումները կենսագործելու ձևեր և մեխանիզմներ:
- Խորհրդարանի նիստի քննարկմանը ներկայացնում կանոնադրական փոփոխություններ կատարելու մասին առաջարկներ:
- Կազմակերպում խորհդարանի ընթացիկ աշխատանքները:
- Քննարկում հանձնաժողովների, կուրսերի ուսանողական խորհուրդների, ուսանողական խորհուրդի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների ու մարմինների գործունեության հետ կապված հարցեր, հաստատում դրանց աշխատանքային պլաններն ու մյուս փաստաթղթերը:
- Լսում և քննարկում է հանձնաժողովների, կուրսերի, ուսանողական խորհուրդների, ուսանողական խորհրդի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների ու մարմինների, ինչպես նաև ուսանողական խորհրդի անդամների կողմից ներկայացված հարցերն, առաջարկներն ու աշխատանքային ծրագրերը:

- Լսում և քննարկում հանձնաժողովների, կուրսերի ուսանողա
խորհուրդների, ուսանողական խորհրդի մյուս կառուցվածքային ս
բաժանումների ու մարմինների ընթացիկ գործունեության
սին՝ հաշվետվություններ, զրառումներ և դրանց գնահատում:
- Ամփոփելով ուսանողական խորհրդի նիստի հաստատմանն է ներ
յացնում ուսանողական խորհուրդի գործունեության տարեկան աշ
տանքային պլանը, որի նախագիծը կազմավորվում է հանձնաժողովնե
կուրսերի ուսանողական խորհուրդների, ուսանողական խորհուրդի մյ
ստորաբաժանումների ու մարմինների կողմից ներկայացված աշխատա
քային պլանների համակարգված և հստակեցված միասնական փաթեթ
- Տալիս հանձնարարականներ, քննարկում նախագահության գործունե
թյան առնչվող այլ հարցեր, ընդունում համապատասխան որոշումներ:

Նախագահության անդամներն են՝

Նախագահը, որը ղեկավարում է ուսանողական խորհրդի աշխատանքներ
[illegible] ուսանողական խորհրդի և նախագահության նիստերը, ստորագրու
[illegible]ած որոշումները, ներկայացնում ուսանողական խորհուրդը քոլեջ
[illegible]ական մարմիններում և քոլեջից դուրս փոխհարաբերություններում
[illegible] որոշումներ, տալիս հանձնարարականներ, կարգադրություններ
[illegible]ում խորհրդակցություններ, իրականացնում ընդհանուր վերահսկո
[illegible], տնօրինում ուսանողական խորհրդի ֆինանսական միջոցները, ուսա
[illegible]ական խորհրդում հանդես գալիս նախագահության գործունեության մասի
[illegible]ական հաշվետվությամբ, իրականացնում սահմանված կարգով իրե
[illegible]ված այլ լիազորություններ:

Փոխնախագահը, որը նախագահի բացակայության դեպքում փոխարինում
[illegible], կազմակերպում է կուրսերի խորհուրդների աշխատանքները, կատա-
[illegible] ընդհանուր կազմակերպչական աշխատանքներ:

Քարտուղարը, որը կազմակերպում է խորհրդարանի փաստաթղթային գործա-
[illegible]ները, տնօրինում արխիվը, համակարգում աշխատանքային խմբերի և կա-
[illegible]ածքային այլ ստորաբաժանումների գործունեությունը, կատարում կազմա-
[illegible]ական աշխատանքներ:

Ուսանողական գիտական ընկերության / ուսանողական խորհրդի առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում / *նախագահ,* որը կազմակերպում և ղեկավարում է ուսանողական գիտական ընկերության աշխատանքները:

Հանձնաժողովի նախագահներ, որոնք կազմակերպում և ղեկավարում են համաժողովների աշխատանքները:

15. Ուսանողական խորհրդում ընդհանուր գործունեություն իրականացնելու նպատակով սույն կանոնադրության 20-րդ ա/ ենթակետին համապատասխան որպես մշտական գործող ստորաբաժանումներ, գործում են երեք հանձնաժողովներ՝ ուսումնական, մշակութային և ազատ ժամանցի, լրատվության և տեղեկատվության:

Ֆինանսական միջոցները, լուծարումը

16. Ուսանողական խորհուրդն անվճար օգտվում է քոլեջի տարածքային, գույքային միջոցներից և նյութատեխնիկական սպասարկումից: Նրա ֆինանսական միջոցները գոյանում են քոլեջի բյուջեից կամ արտաբյուջետային միջոցներից կատարվող տարեկան սահմանումներից, դրամաշնորհներից, նվիրատվություններից, հանգանակություններից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և քոլեջի կանոնադրությամբ չարգելվող այլ գործունեությունից:

17. Ուսանողական խորհրդի նյութական և ֆինանսական միջոցները տնօրինում է ուսանողական խորհրդի նախագահը, կամ նրա կողմից լիազորված անձիք: Ֆինանսական ծախսերի մասին ուսանողական խորհրդի նախագահը հաշվետվություն է ներկայացնում ուսանողկան խորհրդին կամ նախագահությանը:

18. Ուսանողական խորհուրդը լուծարվում է ՀՀ օրենսդրությամբ և քոլեջի կանոնադրությամբ սահմանված կարգով:

Կանոնադրության հավելված

Ուսանողական խորհրդի պատվավոր նախագահի մասին

Ուսանողական խորհուրդը իր կանոնադրության սույն հավելվածով սահմանված կարգով կարող է ունենալ պատվավոր նախագահ: Պատվավոր նախագահի կոչում շնորհվում է անհատի, որմ իր գործունեությամբ քոլեջի ուսանողության կյանքում և ուսանողական խորհրդի աշխատանքների կազմակերպման ասպարեզում հանդես է բերել զգալի ավանդ և ներդրումներ:

Պատվավոր նախագահն ընտրվում է ուսանողական խորհրդի նիստում, նախագահության կամ նվազագույնը 10 անդամների գրավոր առաջարկությամբ՝ ընդհանուր ձայների 2/3:

Պատվավոր նախագահը՝

- օժտված է ուսանողական խորհրդի անդամի սույն կանոնադրությամբ նախատեսված բոլոր իրավունքներով: Կարող է մասնակցել ուսանողական խորհրդի նախագահության և մյուս ստորաբաժանումների աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով.
- ուսանողական խորհրդի նախագահության և նյուս ստորաբաժանումների առջև կարող է հանդես գալ առաջարկներով և հարցադրումներով, որոնք ենթակա են պարտադիր քննարկման:
- մշտապես հետևում է ուսանողական խորհրդի աշխատանքային գործունեությանը, պարբերաբար հետաքրքրվում ընթացիկ աշխատանքների և ուսանողական խորհրդում տիրող վիճակի մասին.
- նախագահության համաձայնությամբ ներկայացնում է ուսանողական խորհուրդը քոլեջից դուրս փոխհարաբերություններում: